

*Перевод с русского на армянский язык осуществлен  
ГНКО «Центр переводов министерства юстиции Республики Армения»  
от «2» декабря 2019 года*

*Ռուսերենից հայերեն թարգմանությունն իրականացվել է  
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության  
«Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից  
2 դեկտեմբերի 2019 թվականի*



**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

---

**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

31 հոկտեմբերի 2019 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան, հետևյալ կազմով՝

նախագահող՝ Ժ.Ն. Բախշեև,

զեկուցող դատավոր՝ Ա.Է. Թումանյան,

դատավորներ՝ Ա.Մ. Ածիբբախմովա, Է.Վ. Հայրիյան, Դ.Գ. Կոլոս,  
Տ.Ն. Նեշատաևա, Վ.Խ. Սեյտիմովա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Ա. Ֆեդորցով,  
Կ.Լ. Չայկա,

դատական նիստի քարտուղար՝ Ա.Պ. Մալաշկո,

ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

դեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 14-րդ, 19-րդ, 72-րդ, 75-րդ, 85-րդ հոդվածներով,

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթները պարզաբանելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի հիման վրա տրամադրում է հետեյալ խորհրդատվական եզրակացությունը:

## **1. Դիմողի հարցը**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով, Դիմող, ԵՏՀ) «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթները պարզաբանելու դիմումով դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան):

Դիմումի մեջ նշվում է, որ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) եւ տեխնիկական կանոնակարգման ոլորտում Հանձնաժողովի որոշումների դրույթների կատարման մոնիթորինգ եւ հսկողություն իրականացնելու ընթացքում հայտնաբերվել է անդամ պետություններում Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ հաստատված՝ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ ՄՄ ՏԿ 018/2011) դրույթների տարատեսակ կիրառման պրակտիկա՝ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար Միության մաքսային տարածք ներմուծվող

տրանսպորտային միջոցների համար համապատասխանության գնահատման մասին փաստաթղթեր ստանալու հարցերի կարգավորման մասով:

ՄՄ ՏԿ 018/2011-ի 69-րդ կետին համապատասխան՝ Միության մաքսային տարածք ներմուծվող առանձին տրանսպորտային միջոցների համապատասխանության գնահատում անցկացնելու ընթացքում որպես հայտատու հանդես է գալիս տրանսպորտային միջոցն արտադրողը կամ նրա անունից գործող լիազորված ներկայացուցիչը կամ Միության մաքսային տարածք տրանսպորտային միջոցի ներմուծումն իրականացնող անձը (այդ թվում՝ անձնական օգտագործման համար տրանսպորտային միջոց ներմուծող ֆիզիկական անձը) կամ նրա ներկայացուցիչը:

Անձնական օգտագործման համար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց հայտատուների շրջանակում ընդգրկելը համապատասխանության գնահատման ընթացակարգեր անցկացնելիս, ինչպես Դիմողն է պարզաբանում, պայմանավորված է Միության տարածքում ընդհանուր օգտագործման ճանապարհներին օգտագործվող՝ ներմուծվող տրանսպորտային միջոցների անվտանգությունն ապահովելու (մասնավորապես՝ «կոնստրուկտոր-ավտոմեքենաների», Միության միասնական շուկայի համար չնախատեսված տրանսպորտային միջոցների եւ այլնի ներմուծումը բացառելու) անհրաժեշտությամբ:

ՄՄ ՏԿ 018/2011-ի 70-րդ կետով նախատեսված է, որ առանձին տրանսպորտային միջոցների համապատասխանության գնահատման ընթացակարգը (անկախ ներմուծման նպատակից) բաղկացած է մի շարք փուլերից, որոնք այդ թվում ներառում են տրանսպորտային միջոցի կառուցվածքի տեխնիկական փորձաքննության անցկացումը: Նշված ընթացակարգերը եզրափակելուց հետո հայտատուներին (այդ թվում՝ ֆիզիկական անձանց) տրվում է տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայական:

Դրա հետ մեկտեղ Հանձնաժողովը պարզել է, որ Բելառուսի Հանրապետությունում տեխնիկական կանոնակարգի նշված դրույթները չեն

կիրառվում, քանի որ Բելառուսի Հանրապետության ստանդարտացման պետական կոմիտեի կարծիքով, Պայմանագրին համապատասխան, ֆիզիկական անձը չի կարող հայտատու լինել ՄՄ ՏԿ 018/2011-ի պահանջներին անձնական օգտագործման համար Միության մաքսային տարածք ներմուծվող առանձին տրանսպորտային միջոցների համապատասխանության գնահատում իրականացնելիս:

Դիմողը նշում է, որ որպես այդպիսի մոտեցման հիմնավորում Բելառուսի Հանրապետությունը հղում է անում «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 9 հավելված) (այսուհետ՝ Արձանագրություն) 5-րդ կետի վեցերորդ պարբերության բովանդակությանը, որում, իր կարծիքով, սահմանվում է համապատասխանության գնահատման ժամանակ հայտատու հանդիսացող անձանց շրջանակը, եւ որի մեջ չեն մտնում անձնական օգտագործման համար Միության մաքսային տարածք ապրանքներ ներմուծող ֆիզիկական անձինք:

Արձանագրության 5-րդ կետի դրույթների համաձայն՝ համապատասխանության գնահատման ժամանակ հայտատու կարող է լինել անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձը, որը արտադրող կամ վաճառող կամ արտադրողի կողմից լիազորված անձ է: Ընդ որում, Արձանագրության 5-րդ կետի յոթերորդ պարբերությամբ նախատեսվում է, որ համապատասխանության գնահատման ժամանակ հայտատուների շրջանակը սահմանվում է Միության տեխնիկական կանոնակարգին համապատասխան:

Դիմումի մեջ նշվում է, որ մյուս անդամ պետություններն այլ մոտեցման կողմնակից են եւ համարում են, որ Պայմանագրի 52-րդ եւ 53-րդ հոդվածների դրույթները հաշվի առնելով՝ ցանկացած արտադրանք, որի առնչությամբ սահմանված են պարտադիր պահանջներ, պետք է լինի անվտանգ եւ կարող է

շրջանառության մեջ դրվել միայն համապատասխանության գնահատման ընթացակարգեր անցնելուց հետո: Ընդ որում, Դիմողը հղում է անում Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության եւ առևտրի նախարարության գրությանը, որում նշվում է, որ «կապված կոնկրետ տեխնիկական կանոնակարգերով նախատեսված՝ համապատասխանության գնահատման բոլոր ձևերի առանձնահատկությունները Պայմանագրում հաշվի առնելու հնարավորության բացակայության հետ՝ Արձանագրության 5-րդ կետով ենթադրվում է նաեւ, որ համապատասխանության գնահատման ժամանակ հայտատուների շրջանակը սահմանվում է Միության տեխնիկական կանոնակարգին համապատասխան»:

Այսպիսով, ներկայումս անդամ պետություններում առկա է համապատասխանության գնահատման ընթացակարգեր անցկացնելիս հայտատու լինելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանելու մասով Արձանագրության 5-րդ կետի դրույթների կիրառման երկու տարբեր մոտեցում:

Շարադրվածի հիման վրա՝ Դիմողը Եվրասիական տնտեսական միության դատարանին խնդրում է պարզաբանել՝ Պայմանագրի 53-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի, Արձանագրության 5-րդ կետի վեցերորդ եւ յոթերորդ պարբերությունների դրույթների փոխկապակցված ընթերցումից հետեւում է արդյոք, որ սուբյեկտների չափորոշիչով այն անձանց (իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր) ցանկը, որոնք համապատասխանության գնահատման ժամանակ կարող են լինել հայտատուներ, կարող է փոփոխվել (կամ լրացվել) Միության համապատասխան տեխնիկական կանոնակարգում՝ կախված տեխնիկական կանոնակարգման օբյեկտից եւ մարդու կյանքի ու առողջության պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից:

## **2. Ընթացակարգը Դատարանում**

Դատարանի ստատուտի 68-րդ կետի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101

որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Դատարանի կանոնակարգ):

Պարզաբանման վերաբերյալ գործը Դատարանի կանոնակարգի 75-րդ հոդվածով սահմանված կարգով քննության համար նախապատրաստելու շրջանակներում հարցումներ են ուղարկվել եւ պատասխաններ են ստացվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից, Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարությունից, Ղրղզստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից, Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունից, Բելառուսի պետական համալսարանից, Երեւանի պետական համալսարանից, Ղազախստանի Հանրապետության օրենսդրության եւ իրավական տեղեկատվայնացման ինստիտուտից, Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր օրենսդրության եւ համեմատական իրավագիտության ինստիտուտից, Կազանի (Պրիվոլժսկի) դաշնային համալսարանից, Օ.Ե.Կուտաֆինի անվան Մոսկվայի պետական իրավաբանական համալսարանից:

### **3. Դատարանի եզրահանգումները**

Ղեկավարվելով Դատարանի ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան իրականացնում է Պայմանագրի դրույթների պարզաբանումը միմյանց հետ դրանց համակարգային փոխկապակցվածության շրջանակներում՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների եւ նորմերի հիման վրա՝ հաշվի առնելով «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի դրույթները:

1. Պայմանագրի 51-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում են սկզբունքներ, որոնց համապատասխան իրականացվում է Միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգումը:

Պայմանագրի 51-րդ հոդվածի 3-րդ կետի բլանկետային նորմով սահմանվում է, որ Միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման կարգը, կանոններն ու ընթացակարգերը սահմանվում են սույն Պայմանագրի թիվ 9 հավելվածի համաձայն:

Արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ տեխնիկական կանոնակարգումն արտադրանքին կամ արտադրանքին եւ արտադրանքին ներկայացվող պահանջների հետ կապված նախագծման (ներառյալ հետազննության), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման եւ օգտահանման գործընթացներին ներկայացվող պարտադիր պահանջների սահմանման, կիրառման եւ կատարման ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորումն է, ինչպես նաեւ համապատասխանության գնահատման ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորումը: Արտադրանք հասկացությունն իր հերթին, Արձանագրության 2-րդ կետի նորմ-սահմանման համաձայն, սահմանվում է որպես նյութաիրային ձեռով արտահայտված եւ տնտեսական ու այլ նպատակներով հետագա օգտագործման համար նախատեսված գործունեության արդյունք:

Այսպիսով, Դատարանի մեծ կոլեգիայի կարծիքով՝ տեխնիկական կանոնակարգումը կապված է տեխնիկական-իրավաբանական նորմերի մշակման եւ օգտագործման հետ՝ արտադրանքի արտադրության եւ շրջանառության ոլորտներում հարաբերությունները կարգավորելու նպատակներով:

2. Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերության համաձայն՝ մարդու կյանքի եւ (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի եւ (կամ) առողջության պաշտպանության, սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխարգելման, ինչպես նաեւ էներգետիկ արդյունավետության ու ռեսուրսախնայողության ապահովման նպատակներով Միության շրջանակներում ընդունվում են տեխնիկական կանոնակարգեր:

Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության արգելող նորմով չի թույլատրվում Միության տեխնիկական կանոնակարգերի ընդունում այլ նպատակներով:

Արձանագրության 2-րդ կետով սահմանվում է, որ Միության տեխնիկական կանոնակարգը Հանձնաժողովի կողմից ընդունված է Միության տարածքում տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նկատմամբ կիրառման եւ կատարման համար պարտադիր պահանջներ սահմանող փաստաթուղթ է:

Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման եւ ընդունման, ինչպես նաեւ դրանց մեջ փոփոխությունների կատարման եւ չեղարկման կարգի սահմանման հարցերը սահմանում է Հանձնաժողովը:

Պայմանագրի դրույթներով չի հստակեցվում Հանձնաժողովի այն ակտի տեսակը, որի ձեւով ընդունվում է Միության տեխնիկական կանոնակարգը: Մինչդեռ Պայմանագրի X բաժնի, դրա թիվ 1 հավելվածի («Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթ) եւ թիվ 9 հավելվածի («Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրություն) նորմերի ամբողջության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդպիսին կարող են լինել միայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումները, որոնք նորմատիվ-իրավական բնույթ ունեն, այն է՝ սահմանում են բոլորի համար պարտադիր, ձեւական որոշակի վարքագծի կանոններ, որոնցից բխում են հասարակական հարաբերությունների այն մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, որոնց գործողությունները կարգավորելուն կոչված են տվյալ կանոնները՝ որպես վարքագծի օրինակ:

3. Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերությամբ սահմանվում է, որ Միության տեխնիկական կանոնակարգերը կամ պարտադիր ազգային պահանջները գործում են միայն այն միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի նկատմամբ, որը հաստատվում է Հանձնաժողովի կողմից: Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին կետի վեցերորդ պարբերության համաձայն՝



անդամ պետությունները թույլ չեն տալիս իրենց օրենսդրությամբ սահմանել միասնական ցանկում չընդգրկված արտադրանքին առնչվող պարտադիր պահանջներ:

Դատարանի մեծ կոլեգիան ենթադրում է, որ այն արտադրանքի միասնական ցանկի ձևավորման եւ վարման նպատակը, որի նկատմամբ Միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ, եւ տվյալ արտադրանքի մասով Միության տեխնիկական կանոնակարգերի ընդունումը ԵԱՏՄ-ում ապրանքների առևտրի տեխնիկական արգելքների հաղթահարումն են եւ վկայում են տեխնիկական կանոնակարգման միասնականացման մասին, ինչը ենթադրում է ազգային տեխնիկական կանոնակարգերի փոխարինում ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով:

Պայմանագրի 6-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերին համապատասխան՝ Հանձնաժողովի որոշմամբ հաստատվող՝ Միության տեխնիկական կանոնակարգերը Միության իրավունքի մաս են կազմում եւ չպետք է հակասեն Պայմանագրի դրույթներին: «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) 13-րդ կետի նորմի ուժով՝ տեխնիկական կանոնակարգերն ունեն նորմատիվ-իրավական բնույթ, պարտադիր են անդամ պետությունների համար եւ ենթակա են անմիջական կիրառման՝ անդամ պետությունների տարածքներում: Բացի այդ, Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերության նորմի համաձայն՝ Միության տարածքում դրանք ունեն ուղղակի գործողություն:

4. Պայմանագրի 53-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերության մեջ առկա է իմպերատիվ պահանջ առ այն, որ «Միության տարածքում շրջանառության մեջ դրվող արտադրանքը պետք է անվտանգ լինի»:

Ընդ որում, Արձանագրության 2-րդ կետի նորմ-սահմանման համաձայն՝ անվտանգությունը «վնաս հասցնելու եւ (կամ) կորուստներ պատճառելու հնարավորության հետ կապված անթույլատրելի ռիսկի բացակայությունն է»:

Դատարանի մեծ կոլեգիան անհրաժեշտ է համարում նշել, որ անվտանգության մասին պահանջն ընդհանուր բնույթ ունի եւ վերաբերում է շրջանառության մեջ դրվող ամբողջ արտադրանքին՝ անկախ միասնական ցանկում դրա ընդգրկման եւ դրա վերաբերյալ համապատասխան տեխնիկական կանոնակարգի առկայության փաստից:

Ինչ վերաբերում է արտադրանքին, որին ներկայացվող պահանջները սահմանված չեն Միության տեխնիկական կանոնակարգերով, ապա Պայմանագրի 53-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն՝ դրա անվտանգության ապահովման եւ շրջանառության կանոններն ու կարգը սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

5. Պայմանագրի 53-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերության համաձայն՝ այն արտադրանքը, որի մասով ուժի մեջ է մտել Միության տեխնիկական կանոնակարգ (Միության տեխնիկական կանոնակարգեր), Միության տարածքում շրջանառության մեջ է դրվում՝ պայմանով, որ այն անցել է Միության տեխնիկական կանոնակարգով (Միության տեխնիկական կանոնակարգերով) սահմանված համապատասխանության գնահատման անհրաժեշտ ընթացակարգերը:

Տվյալ իրավական նորմից հետեւում է, որ արտադրանքը շրջանառության մեջ դնելուն նախորդում է տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ համապատասխանության գնահատման ընթացակարգը: Այս եզրահանգումը հաստատվում է նաեւ Արձանագրության 5-րդ կետի չորրորդ պարբերության նորմի դրույթով, համաձայն որի՝ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին շրջանառության մեջ դրվող արտադրանքի համապատասխանության գնահատումն իրականացվում է մինչեւ այն շրջանառության մեջ դնելը:

Դրա հետ մեկտեղ համապատասխանության գնահատման ընթացակարգն ինքնին կանխորոշում է արտադրանքը շրջանառության մեջ դնելը: Սա նշանակում է, որ արտադրանքը չի կարող շրջանառության մեջ դրվել առանց Միության

տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության վերաբերյալ համապատասխան եզրակացության: Արձանագրության 2-րդ կետում, արտադրանքը շրջանառության մեջ դնել ասելով, հասկանում ենք դրա մատակարարումը, ներմուծումը (այդ թվում՝ արտադրողի պահեստից ուղարկումը կամ առանց պահեստավորման բեռնումը)՝ Միության տարածքում առևտրային գործունեության ընթացքում վճարովի կամ անհատույց հիմքով տարածելու նպատակով: Սրանից հետևում է, որ մատակարարի (ներմուծում իրականացնող անձի) մոտ միասնական ցանկում ընդգրկված այն արտադրանքի բացակայությունը, որի մասով գործում է Միության տեխնիկական կանոնակարգը, առևտրային գործունեության ընթացքում Միության տարածքում այդ արտադրանքի տարածման նպատակները չեն ենթադրում տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանության ստուգում:

Միության տեխնիկական կանոնակարգերով սահմանվող՝ տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատումը, Արձանագրության 5-րդ կետի առաջին պարբերության համաձայն, անցկացվում է գրանցման (պետական գրանցման), փորձարկումների, համապատասխանության հավաստման, փորձաքննության ձևերով եւ (կամ) այլ ձևով: Համապատասխանության պարտադիր հավաստումն իրականացվում է համապատասխանության հայտարարագրման եւ սերտիֆիկացման ձևերով (Արձանագրության 5-րդ կետի երկրորդ պարբերություն):

Տեխնիկական կանոնակարգման այն օբյեկտների համար, որոնց նկատմամբ ուժի մեջ չեն մտել Միության տեխնիկական կանոնակարգերը, Արձանագրության 3-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան, գործում են անդամ պետությունների օրենսդրության կամ Հանձնաժողովի ակտերի նորմերը:

6. Դիմողի կողմից առաջադրված հարցին պատասխանելու համար Դատարանի մեծ կոլեգիան անհրաժեշտ է համարում պարզաբանել ինքնին առևտրային գործունեություն հասկացությունը, ինչպես նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնք իրավունք ունեն զբաղվելու դրանով եւ ուրեմն, հայտատուներ լինելու համապատասխանության գնահատման ժամանակ:

Առելտրային գործունեությունը տվյալ դեպքում հոմանիշ է ձեռնարկատիրական գործունեությանը, որի իրականացումը, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն, հնարավոր է միայն որպես անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի գրանցման կամ իրավաբանական անձի ստեղծման պահից:

Անդամ պետությունների քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթների վերլուծության հիման վրա՝ Դատարանի մեծ կոլեգիան փաստում է, որ ձեռնարկատիրական (առելտրային) է համարվում ինքնուրույն, սեփական ռիսկի հիման վրա իրականացվող գործունեությունը, որն ուղղված է գույքի օգտագործումից, ապրանքների վաճառքից, աշխատանքների կատարումից կամ ծառայությունների մատուցումից պարբերաբար շահույթ ստանալուն: Ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներն իրավաբանական անձինք եւ որպես անհատ ձեռնարկատերեր գրանցված ֆիզիկական անձինք են:

Վերը շարադրվածի հիման վրա՝ քննարկվող հարցի վերաբերյալ Դատարանի մեծ կոլեգիան փաստում է, որ համապատասխանության գնահատման ժամանակ հայտատուներ կարող են լինել միայն այն սուբյեկտները, որոնք Արձանագրության 2-րդ կետի նորմ-սահմանման իմաստով զբաղվում են արտադրանքի մատակարարմամբ կամ ներմուծմամբ՝ առելտրային գործունեության ընթացքում Միության տարածքում դրա տարածման նպատակով, այսինքն՝ իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը:

Սրանից հետևում է, որ անհատական օգտագործման համար առանձին ապրանքներ ներմուծող ֆիզիկական անձինք չեն կարող համապատասխանության գնահատման ժամանակ հայտատուներ լինել:

7. Արձանագրության 5-րդ կետի վեցերորդ պարբերության համաձայն՝ համապատասխանության գնահատման ժամանակ հայտատու կարող է լինել անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձը, որն արտադրող կամ վաճառող կամ արտադրողի կողմից լիազորված անձ է:

Տվյալ իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ արտադրանքի համապատասխանության գնահատման դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանափակվում է անձանց երկու կատեգորիայով՝ իրավաբանական անձանցով, որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանցով, որոնց ներկայացվում են հետևյալ պարտադիր պահանջները.

նրանք պետք է գրանցված լինեն անդամ պետության տարածքում՝ դրա օրենսդրությանը համապատասխան.

նրանք պետք է լինեն արտադրողը կամ վաճառողը կամ արտադրողի կողմից լիազորված անձը:

Ընդ որում, այդ սուբյեկտը որպես արտադրողի կողմից լիազորված անձ, Արձանագրության 2-րդ կետի նորմ-սահմանման համաձայն, նաև անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրա տարածքում գրանցված իրավաբանական անձ է կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ, որն արտադրողի, այդ թվում՝ օտարերկրյա արտադրողի հետ պայմանագրի հիման վրա համապատասխանության գնահատման եւ Միության տարածքում արտադրանքը շրջանառության մեջ դնելու ժամանակ գործողություններ է իրականացնում այդ արտադրողի անունից, ինչպես նաև պատասխանատվություն է կրում Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի անհամապատասխանության համար:

Այսպիսով, Արձանագրության 5-րդ կետի վեցերորդ պարբերության նորմով այն անձանց շրջանակը, որոնք կարող են համապատասխանության գնահատման դիմում ներկայացնել, սահմանափակվում է միայն իրավաբանական անձանցով եւ անհատ ձեռնարկատերերով:

8. Արձանագրության 5-րդ կետի յոթերորդ պարբերությամբ սահմանված է, որ համապատասխանության գնահատման ժամանակ հայտատուների շրջանակը սահմանվում է տեխնիկական կանոնակարգին համապատասխան:

Տվյալ իրավական նորմի իմաստից հետևում է, որ Միության համապատասխան տեխնիկական կանոնակարգում Արձանագրության 5-րդ կետի վեցերորդ պարբերության մեջ նշված սուբյեկտներից ճշտվում (մանրամասնեցվում) է դիմում ներկայացնող անձանց սուբյեկտների կազմը՝ էլնելով տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի կոնկրետ տեսակից ու հատկություններից, եւ համապատասխանության գնահատման կոնկրետ ձեւի մասով: Այսպես՝ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության 018/2011 տեխնիկական կանոնակարգի 25-րդ կետի համաձայն՝ էթե տրանսպորտային միջոցները (շասսին) արտադրվում են Մաքսային միության միասնական մաքսային տարածքում, ապա տիպի հաստատումն իրականացնելու ժամանակ հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան գրանցված եւ այդ պետության ռեզիդենտ հանդիսացող արտադրողը, **որին շնորհվել է տրանսպորտային միջոցի արտադրողի միջազգային նույնականացման ծածկագիր**, կամ արտադրողի անունից գործող նրա պաշտոնական ներկայացուցիչը: Մաքսային միության անդամ պետության ռեզիդենտ չհանդիսացող արտադրողը Մաքսային միության յուրաքանչյուր անդամ պետությունում նշանակում է իր ներկայացուցչին, որն արտադրողի հետ համատեղ պատասխանատվություն է կրում տեխնիկական կանոնակարգի պահանջներին շրջանառության մեջ դրվող, տիպի հաստատումն անցած արտադրանքի համապատասխանությունն ապահովելու համար: Արտադրողի ներկայացուցիչը Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան գրանցված եւ այդ պետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձն է:

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատում անցկացնելիս արտադրողին, վաճառողին կամ արտադրողի կողմից լիազորված անձին հայտատու լինելու իրավունք վերապահելով՝ Պայմանագիրը (Արձանագրությունը) հիմնվում է այն փաստի վրա, որ շրջանառության մեջ դնելու

պահը կարող է կապված լինել ոչ միայն արտադրողի պահեստից ուղարկելու կամ առանց պահեստավորման բեռնառաքելու հետ կապված՝ արտադրանքի նկատմամբ իրավունքների փոխանցման հետ, այլ նաև Միության տարածքում առևտրային գործունեության ընթացքում վճարովի կամ անհատույց հիմքով տարածելու նպատակով դրա ներմուծման կամ մատակարարման հետ: Արտադրանքը շրջանառության մեջ դնելիս առևտրային գործունեությունն իրականացնելու ցուցումով սահմանափակվում է այն սուբյեկտների շրջանակը, որոնք համապատասխանության գնահատման դիմում ներկայացնելու իրավունք ունեն:

Այլ մեկնաբանմամբ, որը ենթադրում է, որ Արձանագրության 5-րդ կետի յոթերորդ պարբերությունը թույլ է տալիս Միության տեխնիկական կանոնակարգում լրացնել նորմի՝ տվյալ կետի վեցերորդ պարբերությամբ սահմանված սուբյեկտների կազմը, հենց վեցերորդ պարբերությունը փաստացի զրկվում է օգտակար գործողությունից, քանի որ նմանատիպ մեկնաբանման դեպքում դրա բացակայությունը ոչ մի կերպ չի ազդում իրավահարաբերության իրավական կարգավորման արդյունքի վրա:

Դատարանի մեծ կոլեգիան հաստատում է, որ Արձանագրության 5-րդ կետի վեցերորդ պարբերությունն ինքնուրույն իմաստ ունի. համապատասխանության գնահատման ընթացակարգի սուբյեկտներ կարող են լինել միայն շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցները՝ իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը: Այդ եզրահանգումն ամբողջությամբ համապատասխանում է Պայմանագրի 53-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերության եւ Արձանագրության 2-րդ կետի դրույթներին այն արտադրանքը շրջանառության մեջ դնելու հարցի մասով, որը մատակարարվում, ներմուծվում է առևտրային գործունեության ընթացքում տարածման նպատակով, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի պահպանման նկատմամբ պետական հսկողության մասով, որն ուղղված է տեխնիկական կանոնակարգերի պահանջների այն խախտումները կանխարգելելուն, հայտնաբերելուն եւ կանխելուն, որոնք կատարվում են՝

իրավաբանական անձանց, դրանց ղեկավարների եւ այլ պաշտոնատար անձանց կողմից.

որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց կողմից.

նրանց ներկայացուցիչների կողմից:

Արձանագրության 6-րդ կետի նորմի դրույթն այն մասին, որ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանող՝ համապատասխանության գնահատման ընթացակարգեր անցած արտադրանքը ենթակա է Միության շուկայում արտադրանքի **շրջանառության** միասնական նշանով պարտադիր մակնշման, որը պետք է զետեղվի ռուսերենով եւ անդամ պետությունների օրենսդրության մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում՝ այն անդամ պետության պետական լեզվով (լեզուներով), որի տարածքում **իրացվում է** արտադրանքը, նաեւ տարածվում է միայն Միության տարածքում կամ անդամ պետության (որի լեզվով զետեղվում է մականշվածքը) տարածքում **շրջանառության մեջ դրվելու** եւ **իրացվելու** ենթակա ապրանքների վրա եւ չի ենթադրում **իրացման** համար չնախատեսված առանձին ապրանքների պարտադիր մակնշում Միության շուկայում արտադրանքի **շրջանառության** միասնական նշանով: Այս փաստը եւս մեկ անգամ հաստատում է եզրահանգումն այն մասին, որ անձնական օգտագործման համար ապրանքներ ներմուծող ֆիզիկական անձինք Միության այս կամ այն տեխնիկական կանոնակարգին արտադրանքի համապատասխանության գնահատման դիմում ներկայացնելու սուբյեկտներ չեն:

9. Հաշվի առնելով շարադրվածը՝ Դատարանի մեծ կոլեգիան հիմնավորված է համարում հետեւյալ եզրահանգումը:

Պայմանագրի 53-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի, Արձանագրության 5-րդ կետի վեցերորդ եւ յոթերորդ պարբերությունների դրույթների փոխկապակցված ընթերցումից հետեւում է, որ համապատասխանության գնահատման ժամանակ հայտատուների շրջանակը սահմանվում է տեխնիկական կանոնակարգով Արձանագրության 5-րդ կետի վեցերորդ պարբերության մեջ նշված անձանց թվից՝ կախված տեխնիկական կանոնակարգման օբյեկտի առանձնահատկություններից:



#### 4. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել էլ Դիմողին:

Խորհրդատվական եզրակացության տեքստը հրապարակել էլ Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ժ.Ն. Բաիշեւ

Դատավորներ՝

Ա.Ս. Աժիբրաիմովա

Է.Վ. Հայրիյան

Դ.Գ. Կոլոս

Տ.Ն. Նեշատաեւա

Վ.Խ. Սեյտիմովա

Գ.Ա. Սկրիպկինա

Ա.Է. Թումանյան

Ա.Ա. Ֆեդորցով

Կ.Լ. Չայկա